ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 դեկտեմբերի 2023 թվականի N 2134 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 3-րդ կետի 1-ին ենթակետի՝

ա. «բ» պարբերությունից հանել «(կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի դեպքում՝ մահվան վկայականի)» բառերը,

բ. «զ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ. եթե դիմումը ներկայացվում է ընտանիքում երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստի համար, ապա նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնվող երեխայի (զավակի) անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդյան վկայականի սերիան և

համարը, ծննդյան վկայականը հատկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, մինչև նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացած երեխաների (զավակների) մահվան վկայականի սերիան և համարը։».

2) 3.5-րդ և 33.1-ին կետերի 2-րդ ենթակետերում «երկրորդ» բառը փոխարինել «երրորդ» բառով.

3) 4-րդ կետի 6-րդ ենթակետից հանել «կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի ծննդի պետական գրանցման փաստը հաստատող փաստաթուղթը» բառերը.

4) 8-րդ կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերությունը «կամ» բառից հետո լրացնել «այդ երեխայի (զավակի) ծննդյան վկայականում» բառերով.

5) 8.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.1. Նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նաև մինչև նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացած երեխաները և զավակները (բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք մահացել են պերինատալ շրջանում), եթե նրանք նոր ծնված երեխայի՝

1) ծնողներից (հորից և մորից) սերված երեխաները և զավակներն են (նոր ծնված երեխայի հարազատ քույրերն ու եղբայրները) .

2) համամայր քույրերն ու եղբայրներն են, եթե քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝ այդ երեխայի (երեխաների) ծննդյան ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունը լրացվել է մոր գրավոր հայտարարության հիման վրա կամ այդ երեխայի (զավակի) ծննդյան վկայականում հոր մասին տեղեկությունը չի լրացվել (եթե նպաստը նշանակվելու է նոր ծնված երեխայի մորը), բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետում նշված դեպքի.

3) համամայր կամ համահայր՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի

Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայող քույրերն են կամ եղբայրները:»:

2. Սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետը տարածվում է այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո: Սույն կետում նշված դեպքում, եթե արդեն նշանակվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ և նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշվել է առանց հաշվի առնելու մինչև նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացած նրա քրոջը կամ եղբորը (բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք մահացել են պերինատալ շրջանում), ապա նշանակված նպաստի չափը վերահաշվարկվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում կրկին դիմելու դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ